ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 սեպտեմբերի 2025թ. թիվ 538-Ա

## ԱՆԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 04.09.2025թ. թիվ 02/09.2/28426-2025 գրությունը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Կուրթանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Նալբանդյանի 05.09.2025թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ու մ   եմ.

1. Աշխատանքային պարտականությունները ոչ լիարժեք կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Կուրթանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Անի Նալբանդյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ն.Բարիկյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ   Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 17
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
АППАРАТ МАРЗПЕТА ЛОРИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
STAFF OF LORI MARZPET OF THE REPUBLIC OF ARMENIA